

Յուլիս 26, 1980

Ազնուափայլ
Երեցկին Յասմիկ Պիպերեան
Նիւ Եորք.

Սիրելի Երեցկին Պիպերեան,

Ենորհակալութեամբ ստացանք ձեր հանգուցեալ ծնողաց՝ Յովէլ
եւ Փարիզ Գալայճեանի եւ Մարտիկեան ընտանիքի ի յիշատակ Ս.
Վարդան Մայր Տաճարի ըրած լման Պատարագի գեղեցիկ զգեստը:

Տարւոյս Սեպտեմբեր ամսուան ընթացքին Մայր Տաճարին մէջ
Ս. Պատարագէն ետք պիտի կատարուի մասնաւոր Հոգեհանգստեան
Պաշտօն, որուն ընթացքին պիտի յիշենքք անունները ձեր հանգուց-
եալ ծնողաց Յովէլ եւ Փարիզ Գալայճեանի եւ Մարտիկեան ընտանի-
քի: Հոգեհանգստեան վերջնական թուականը կանխաւ պիտի տեղեկաց-
ւի ձեզի:

Կաղօթենք որ Տէրը ձեր ննջեցեալ սիրելիներուն պարզեւէ
յաւիտենական հանգիստ եւ խղաղութիւն իր արթայութեան մէջ:
Ձեզի ալ շնորհէ հաստատուն առողջութիւն եւ երկար կեանք,
որպէս զի միշտ ձեր ներկայութիւնը վայելենք Մայր Տաճարի
շուրջ եւ դուք ալ շարունակէք ձեր նուիրեալ եւ հաւատարիմ
ծառայութիւնը Աստուծոյ Տան:

Աղօթարար

Խաժակ Վրդ. Պարսամեան
Լուսարարպետ